

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

### ԵՎԳԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Արդի հասարակությունները նմանվում են սոցիալական ծավալուն բարեփոխումների մի համակարգի, որի անքակտելի մասն են կազմում հասարակության տարրեր բնագավառներում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունները: Այդ փոփոխությունները, ներթափանցելով հասարակական կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներ, պայմանավորում են դրանց գործունեության և հարաբերությունների բնույթն ու որակը:

Չնայած յուրաքանչյուր համակարգի գերագույն նպատակը համակարգում տիրող հավասարակշռության պահպանումն է, սակայն կայուն վիճակի մշտական և լիարժեք պահպանումը գրեթե անհնար է: Այդ առումով S. Պարսոնսը գտնում է, որ սոցիալական համակարգի հավասարակշռության պահպանումը և վերականգնումը խիստ հարաբերական են, քանի որ գործնականում գրեթե անհնար է հանդիպել լիովին հավասարակշիռ և կայուն վիճակում գտնվող սոցիալական համակարգի: Դրա պատճառներից մեկն այն է, որ սոցիալական փոփոխություններն ու տարաբնույթ փոխակերպումները սոցիալական համակարգը մշտապես անհանգստացնող երևույթներ են<sup>1</sup>:

Սոցիալական բոլոր փոփոխությունները՝ անգամ մարդու համար ամենացանկալի, նրա կյանքում առաջացնում են դժվարություններ: Նույնիսկ սոցիալական այնպիսի փոփոխությունները, ինչպիսիք են ծնունդն ու մահը, ամուսնությունն ու ամուսնալուծությունը, մշտապես խախտում են համակարգի կայունությունը ու նրան ստիպում համախմբել իր ռեսուրսները՝ կարգը վերահսկատատելու նպատակով: Անգամ դժվար է ասել, թե սոցիալական համակարգին ավելի շատ ո՞ր վիճակն է բնորոշ՝ հավասարակշռությունը, թե՝ անհավասարակշռությունը: Այնտեղ մշտապես կատարվում են փոփոխություններ, որոնք շղթայական ռեակցիայով ի վերջո հանգեցնում են համակարգի փոփոխության:

Համակարգին բնորոշ են ոչ միայն սոցիալական տարաբնույթ փոփոխություններ, այլ նաև գլոբալ և ծավալուն փոխակերպումներ, որոնք կարող են էական ազդել ողջ համակարգի գործունեության վրա: Այսինքն՝ կարող ենք ասել, որ ցանկացած սոցիալական համակարգ լայն իմաստով փոխակերպող է, քանի որ գտնվում է մշտական փոփոխման ու զարգացման վիճակում:

«Փոխակերպում» հասկացությունը սերտորեն կապված է «անցումային հասարակություն» հասկացության հետ: Մասնագիտական գրականության մեջ «անցումային հասարակություն» հասկացությունը բնութագր

<sup>1</sup> Տե՛ս Talcott Parsons. The Social System. A Free Press Paperback, New York, 1965, էջ 375:

վում է որպես սոցիալական համակարգի այնպիսի վիճակ, երբ հասարակության նախորդ որակական որոշակիությունը այլևս գերիշխող չէ, իսկ նորը գտնվում է ձևավորման գործընթացում<sup>2</sup>: «Անցումային հասարակություն» հասկացությունը բնորոշելու համար կարելի է առանձնացնել հետևյալ բնութագրիչները:

1. Անցումային հասարակությունում տեղի են ունենում այնպիսի փոխակերպումներ, որոնք էականորեն ազդում են հասարակության գաղափարաքաղաքական, կառուցվածքային-ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական ու բարոյահոգեբանական ոլորտների վրա: Այդ փոխակերպումների պատճառով համակարգը անխուսափելիորեն կորցնում է նախորդ որակական որոշակիությունը և ձեռք է բերում որակական որոշակիության նոր հիմունքներ: Այսինքն՝ կարող ենք միանշանակորեն պնդել, որ անցումային հասարակությանը բնորոշ են փոխակերպումային մեծածավալ գործընթացներ:

2. Ցանկացած անցումային հասարակություն նաև փոխակերպվող է: Բայց ամեն մի փոխակերպում դեռևս չի նշանակում, որ համակարգն անցումային է: Անցումային հասարակությունը սոցիալական համակարգերի անվերջ փոխակերպումների կոնկրետ ու սահմանափակ փուլ է, որի ավարտից հետո ձևավորված նոր համակարգը ձեռք է բերում գոյության և վերարտադրության, զարգացման ու գործառության նոր հիմունքներ և այդ հիմունքների շրջանակներում շարունակում իր ներհամակարգային փոխակերպումները<sup>3</sup>:

3. Անցումային հասարակության բնորոշ գծերից է նաև այն, որ անցումային հասարակություններում տեղի ունեցող փոխակերպումների ընթացքում և դրանց հետևանքով մարդիկ հայտնվում են այլընտրանքային մի իրավիճակում, որտեղ հնի ու նորի պայքարը ձեռք է բերում ընդգծված զաղափարաքաղաքական և իմաստարժեքային ուղղվածություն: Այդ համատեքստում առաջանում է նախորդ կենսափիլիսոփայության, մշակութային արժեքների և նորմերի վերահմաստավորման և վերագնահատման անհրաժեշտություն: Հասարակությունը հայտնվում է համակեցության տարբեր սկզբունքների, մրցակցող հնարավորությունների ու այլընտրանքների ռիսկաշատ դաշտում: Սոցիոնշակութային ռիսկը, այսպիսով, դաշտում է փոխակերպվող հասարակությունների բնականոն ուղեկիցը:

4. Քանի որ փոխակերպվող հասարակությունների բնորոշ գծերից է անորոշությունների և ռիսկայնության ամնախաղեպ աճը, ապա նմանատիպ իրավիճակներում դժվարանում է նույնականության կայուն չափորոշիչների գործառությունը, և նվազում է նրանց հուսալիությունը: Փաստութեն, կենսագործունեության կազմակերպման նոր իրողություններում մարդը գործնականում կորցնում է նույնականության երեսնի հենարանները, որոնք նախկինում մեծապես պայմանավորում էին նրա վարքը և գործողությունների տրամարանությունը<sup>4</sup>:

5. Փոխակերպվող և արդեն իսկ անցումային փուլ թևակոխած հասարակությունների փորձը ցույց է տալիս, որ այդ հասարակություններին

<sup>2</sup> Տե՛ս Ա. Յարությունյան, Անցումային հասարակությունը որպես տրամաֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000, էջ 3:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 5:

<sup>4</sup> Տե՛ս Ա. Յարությունյան, Սոցիոնշակութային փոխակերպումներ և նույնականության ճգնաժամ: «Անցումային հասարակություն. սոցիոնշակութային փոխակերպումներ», հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 3:

բնորոշ է անհանդուրժողականությունը, որը դրսնորվում է ոչ միայն քաղաքական ուժերի փոխարաբերություններում, այլ նաև սոցիալական կյանքում: Բանն այն է, որ համակարգային փոխակերպումներն առնչվում են հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական-գաղափարական ու բարոյահոգեբանական հիմքերին և կանխորոշում են մարդկանց տեղն ու դերը ինստիտուտային կառույցներում: Ինքնին հասկանալի է, որ նախորդ սոցիոնշակութային դաշտի բացասումով բացասվում է նաև մարդկանց շահերի պաշտպանության նախորդ համակարգը<sup>5</sup>:

6. Ոիսկայնության և տագնապայնության բարձր մակարդակներով աչքի ընկնող անցումային հասարակություններում հասարակության անդամների կողմից սոցիալական վարքի դրսնորման դրդապատճառ է դառնում ոչ թե զարգացումը, այլ անվտանգությունը, ինչպես նաև փոխակերպումների ազդեցությանք ստեղծված նոր իրավիճակին հարմարվելու անհրաժեշտությունը: Նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ մարդն իր վարքով խթանում է որոշակի տիակի փոփոխության իրականացումը, միևնույն է, նորաստեղծ իրադրությանը հարմարվելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը և հարմարվողական մեխանիզմների գործի դնելը անխուսափելի հանգամանք են տվյալ անձի և նրա շրջապատի համար:

Ներկայումս անհնար է անտեսել սոցիալական փոխակերպումների՝ ոչ այնքան բարենպաստ ազդեցությունները անհատի, խմբի և հասարակության վրա առհասարակ: Մեր օրերում սոցիալական փոխակերպումները դիտարկվում են «տրավմա» հասկացության վերաբերյալ եղած հայեցակարգերի տեսանկյունից, ինչը ենթադրում է, որ սոցիալական փոխակերպումները նույնացվում են տրավմատիկ իրադրությունների հետ և դիտվում լարվածություն, անհանգստություն և կոնֆլիկտներ ծնող երևույթները: Եթե դիտարկենք սոցիալական փոխակերպումների ազդեցությունն ու հետևանքներն անհատական մակարդակի վրա, ապա պետք է նշել, որ սոցիալական փոխակերպումների ազդեցությանք կարող են տեղի ունենալ անձի կենսագործունեության և սոցիալական փոխարաբերությունների որակի ու բնույթի վրա ազդող գործընթացներ: Անձը կրում է լուրջ փոփոխություններ իր կենսակերպի, մտածելակերպի ու վարքի առումով: Այսինքն՝ ծայրահեղ փոփոխությունների կարող են ենթարկվել տվյալ անձի «աշխարհը», նրա արժեքային համակարգն ու դիրքորոշումները: Սոցիալական փոխակերպումները պայմանավորում են անձի կենսագործունեության բնականոն ընթացքի խթարումը, քանի որ փոխակերպումներին բնորոշ նորմատիվ և արժեքային հստակ կողմնորոշչների բացակայությունը մարդկանց համակում է անօգնականության և սոցիալական մեկուսացվածության գիտակցությամբ: Փոխակերպման փուլերի սոցիալական ախտանիշներ են դաշտում անորոշությունը, անվստահությունը, տագնապն ու վախր: Նախկինում գործող կանոններն ու նորմերն այլևս դաշտում են անօգտակար և անհուսալի, իսկ նորերը՝ խորթ, ինչը, ի վերջո, հասարակության մեջ գերիշխող է դարձնում սոցիալական անբավարարվածության գագառումը:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Լ. Ղարագուլյան, Փոխակերպվող հասարակություն և սոցիոնշակութային այլընտրանքներ, Եր., 2009, էջ 10:

<sup>6</sup> Տե՛ս Ռոմկա Պ. Социальное изменение как травма. «Социологические исследования: ежемесячный научный и общественно-политический журнал». М., 2002, էջ 6:

Սոցիալական փոխակերպումներն իրենց ազդեցությունն են քողում նաև անձի սոցիալականացման գործընթացի վրա: Ծիշտ է, փոխակերպումների սկզբնական փուլում առաջնային ուշադրության են արժանանում սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմնահարցերը, բայց փոխակերպումների խորացման ու զարգացմանը զուգընթաց առաջին պլան են մղվում հասարակական հարաբերությունների, արժեքների և նորմների անհատականացման, անհատի կողմից դրանց յուրացման և վերարտադրության հետ կապված հիմնախնդիրները: Անցումային հասարակություններում սոցիալականացման հետ կապված հիմնահարցերը կարևորվում են այն պատճառով, որ տեղի են ունենում համակարգային այնախսի փոփոխություններ, որոնք առնչվում են հասարակարգի սոցիալ-տնտեսական, գաղափարաքաղաքական ու բարոյահոգեքանական հիմքերին: Բնականաբար, նման համակարգը շահագրգոված է, որ անձի սոցիալականացումն իրականացվի տվյալ անցումային հասարակության խնդիրներին ու նպատակներին համապատասխան, քանի որ միայն այդ պարագայում տեղի ունեցող փոփոխությունները չեն լինի առարկայագործ և արտաքինից պարտադրված: Այդ փաստն ունի շատ կարևոր նշանակություն, քանի որ համակարգային փոփոխությունների ընթացքում հասարակության սոցիալապես անպաշտապան խմբերը ռիսկային գոտում են գտնվում ոչ միայն սոցիալական, այլև արժեքային-գաղափարական օտարման ենթարկվելու առումով: Անցումային հասարակություններում, որտեղ նաև չկա նորմների միասնական ու կայուն համակարգ, սոցիալական բազմաթիվ արժեքներ սկսում են հակասել միջյանց: Տարիներ շարունակ մարդկանց վարքը կարգավորող արժեքների ու նորմների բախումը վերափոխված հասարակության արժեքների ու նորմների հետ զարգացման որոշակի աստիճանում վերածվում է կոնֆլիկտի, որն էապես ազդում է անձի կենսագործունեության բնույթի և որակի վրա:

Փոխակերպումային գործընթացները, ենթադրելով մշակութային փոփոխություններ, ազդում են հասարակության իմաստային համակարգի վրա՝ նոր իմաստ հաղորդելով արդեն իսկ գոյություն ունեցող սիմվոլներին, ստեղծելով նոր՝ նախկինում չօգտագործվող կամ չկիրառվող սիմվոլներ: Արժեքները, իրենց հերթին, կորցնում են այն արժեքը, որ ունեին նախկինում և պահանջում են անիրականանալի նպատակների հրականացում: Սոցիալական նորմները կորցնում են իրենց ազեցությունը մարդկանց վարքի վրա և դադարում են յուրօրինակ «փարոս» հանդիսանալ մարդկանց կողմից ընդունելի և անընդունելի վարքածերի դրսնորման առումով, հավատալիքները կարող են մերժվել, իսկ կրոնի հիմքերը՝ խարխլվել: Որպես մշակութային տրավմա առաջացնող սոցիալական փոխակերպումների օրինակ կարելի է դիտարկել մշակութային գլոբալացումը, որը երբեմն անվանում են նաև վեստերնացում, ամերիկանացում, նույնիսկ՝ մակդոնալդացում:

Այսպիսով, ննանատիպ ծավալուն փոխակերպումները, անգամ եթե դրական արդյունքներ ստանալու ակնկալիքով են կատարվում, քողում են իրենց բացասական ազդեցությունը այդ փոխակերպումների հետ անմիջականորեն կամ միջնորդավորված կերպով առնչվող մարդկանց վրա:

Այս հանգանաքը բազմիցս է դարձել գիտական տարրեր ուղղությունների ներկայացուցիչների ուշադրության առարկա: Օրինակ, դասա-

կան սոցիոլոգիայի կարկառուն ներկայացուցիչ է. Դյուրկիեյմը նշում է, որ անգամ հասարակության բարօրության տեսակետից դրական համարվող իրադարձությունները, եթե դրանք ի հայտ են գալիս կտրուկ փոփոխությունների տեսքով, ունենում են բացասական հետևանքներ անձի և հասարակության վրա, քանի որ խախտում են վերջիններիս բնականոն կյանքի ընթացքը<sup>7</sup>: Այսպիսի իրավիճակներում կարևոր է դառնում վերահարմարման և վերասոցիալականացման գործընթացների արդյունավետ իրականացումը, ինչը կարող է հնարավորություն ստեղծել կրկին ակտիվորեն գործելու և հանդես գալու որպես հասարակության կամ խմբի լիարժեք ու լիիրավ անդամ:

Սակայն հաճախ անձն ի գորու չի լինում ինքնուրույն համախմբելու իր ռեսուլուսները կամ ձեռք բերելու նորերը՝ այդ ամենն արդյունավետորեն իրականացնելու նպատակով: Արտաքին աջակցություն ստանալու անհրաժեշտությունը առաջնային է դառնում հատկապես նմանատիպ իրադրություններում: Ակնկալվող և անհրաժեշտ սոցիալական աջակցություն կարող է ցուցաբերել հենց սոցիալական աշխատողը: Այս գաղափարը ներկայացված է Ուլիլիամ Շվարցի տեսության մեջ: Շվարցը գտնում է, որ թեև հասարակության և հասարակության անդամների շահերն ու սպասումները հիմնականում համապատասխանում են միմյանց, սակայն հաճախակի են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ սոցիալական փոփոխությունների հետևանքով այդ համապատասխանությունն ու հավասարակշռությունը խախտվում են՝ նպաստելով, որ ստեղծվի այնպիսի իրավիճակ, որում տվյալ անձի՝ որպես հասարակության լիարժեք անդամի և հասարակության՝ տվյալ անձին իր շարքերն ինտեգրելու և արդյունավետորեն գործառելու հնարավորությունները սահմանափակվում են կամ վերանում: Շվարցը սոցիալական աշխատանքը համարում է հենց այն մասնագիտությունը, որը կարող է նպաստել, որ վերականգնվի հասարակության և տվյալ անձի միջև առկա կապը, և նրանք երկուսն ել «համագործակցելու» հնարավորություն ստանան<sup>8</sup>:

Շեշտադրելով սոցիալական աշխատանքի միջամտական մոդելը՝ Շվարցը նշում է, որ սոցիալական աշխատողի մասնագիտական միջամտության շնորհիվ տվյալ անձը հնարավորություն է ստանում հաղթահարելու իրեն անհանգստացնող բազմաթիվ սոցիալ-հոգեբանական խնդիրներ, բացահայտելու իր ներուժն ու ռեսուլուսները, զարգացնելու սոցիալական փոխհարաբերությունները, ինչպես նաև բարձրացնելու իր կյանքի որակը: Հասարակությունն իր հերթին հնարավորություն է ձեռք բերում աջակցելու հասարակության անդամների ինքնադրսնորմանն ու ինքնազարգացմանը, ինչպես նաև նպաստելու հասարակությանը հանդես գալու ամբողջական միասնությամբ: Այսպիսով, ինչպես գտնում է Շվարցը, սոցիալական աշխատողի մասնագիտական միջամտության միջոցով հասարակությունն ու հասարակության անդամները կարողանում են հասնել միմյանց պահանջնունքների ու սպասումների փոխադարձ բավարարմանը, որը խաթարվել էր

<sup>7</sup> St. on Deviant Behavior. Readings in the Sociology of Deviance/ Delos H. Kelly. St. Martin's Press. New York, 1979, էջ 52:

<sup>8</sup> St. Compton, Galaway. Social Work Processess. California, Wadsworth Publishing Company, 1989, էջ 7:

սոցիալական փոխակերպումների հետևանքով, այսինքն՝ նրանք սկսում են «նայել» միևնույն ուղղությամբ<sup>9</sup>: Այսպիսով, սոցիալական աշխատողն իր գործունեությունն ուղղում է սոցիալական միջավայրում անձի հարմարման գործընթացի նպաստմանը: Սոցիալական աշխատողի դերը հասարակության որոշ խմբերի անդամների հարմարման գործընթացում, առաջին հերթին, սոցիալական միջավայրի և անձի պահանջների, կարիքների, ինչպես նաև ռեսուրսների ու հնարավորությունների համապատասխանեցման կամ վերջիններիս միջև հավասարակշռության հաստատման մեջ է: Նշված նպատակներին հասնելու համար սոցիալական աշխատողը կարող է իր մասնագիտական միջամտությունն ուղղել սոցիալական միջավայրում հարմարման դժվարություններ ունեցող անձի հետ խորհրդատվություն իրականացնելուն, որի ընթացքում սոցիալական աշխատողն աջակցում է այցելուին հստակ պատկերացում կազմելու խնդրահարույց իրավիճակի վերաբերյալ, այն հնարավորինս ստույգ սահմանելու և լուծմանն ուղղված այլընտրանքային միջոցներ մշակելու և իրագործելու հարցում: Սոցիալական աշխատողը կարող է նաև տեղեկատվական գործառույթ իրականացնել՝ անհրաժեշտ տեղեկություններ մատուցելով այցելուին. թե ինչպիսի պահանջներ կամ սպասումներ և նորմներ է ներկայացնում սոցիալական միջավայրը, և ինչպես կարելի է հետևել այդ կանոններին ու համապատասխանել հասարակության կողմից ներկայացվող սոցիալական պահանջներին: Սոցիալական աշխատողի գործունեությունը կարող է ուղղվել նաև այցելուի մոտ օրինակելի վարքագծեր ձևավորելուն և նպաստել համապատասխան միջավայրում համարժեք դրսերելուն: Վարքի ուսուցումը և վարքի մոդելավորումը ապահարմարման ախտանիշներով անձանց հետ տարվող աշխատանքներում պարզապես անփոխարինելի թերապևտիկ միջոցներ են:

Սոցիալական աշխատողն իր մասնագիտական գործունեության թիրախը կարող է դարձնել նաև սոցիալական միջավայրը՝ նպաստելով, որ վերջինս դառնա առավել արձագանքող խորհրդառուի տարաբնույթ խնդիրների հանդեպ, առավել համապատասխան՝ խորհրդառուի կարիքներին ու պահանջներին և առավել պատրաստակամ՝ նմանատիպ խնդիրների լուծման գործընթացում աջակցություն ցուցաբերելու համար:

Փոխակերպումների իրականացման ընթացքում և որպես փոխակերպումների հետևանք կարող են բարդանալ ու նույնիսկ «խճճվել» սոցիալական ինստիտուտների և անձանց միջև հարաբերությունները: Ընդհանուրապես, սոցիալական ինստիտուտներ հիմնելու և գործառելու բուն նպատակը մարդկանց պահանջների բավարարումն է և նրանց հուզող հիմնախնդիրների լուծման աջակցելը: Սակայն փոխակերպվող հասարակություններում սոցիալական ինստիտուտների գործունեությունն այնպիսի բնույթ է ստանում, որ հենց այդ ինստիտուտներն են պատճառ դառնում կամ նպաստում հասարակության անդամների մեջ տարաբնույթ հիմնախնդիրների առաջացմանն ու սրմանը: Հետևաբար, այն ծառայությունները, որոնք ստեղծված են մարդկանց համար և համուն մարդկանց, հեռանում են հենց այդ նույն մարդկանցից և նրանց աջակցելու փոխարեն դրսերում են քամահրական և արհամարհական վերաբերմունք: Նման

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 9:

դեպքերում սոցիալական աշխատողի մասնագիտական աջակցությունը կարող է օգտակար լինել:

«Մասնագիտական հարված»։ ահա այսպես է բնութագրել Լոռիենս Շուլմանը սոցիալական աշխատողի կողմից իրականացվող գործունեությունն այնպիսի դեպքերում, երբ այդ գործունեության թիրախը սոցիալական ինստիտուտներն են կամ սոցիալական ինստիտուտների և հասարակության անդամների խաթարված փոխհարաբերությունները։ «Մասնագիտական հարված» տերմինը սահմանվում է որպես սոցիալական աշխատողի մասնագիտական գործունեության ձև, որն ուղղված է։

1. փոփոխություններ մտցնելու սոցիալական ինստիտուտների և կազմակերպությունների կողմից իրականացվող քաղաքականության ու մատուցվող ծառայությունների մեջ, եթե վերջիններս չեն ծառայում բնակչության շահերին,

2. զարգացնելու տվյալ ինստիտուտի կամ կազմակերպության աշխատանքային ներքին մշակույթը, որը կարելի է բնորոշել որպես տվյալ կազմակերպության աշխատակիցների համագործակցության նակարդակ և փոխհարաբերությունների բնույթ, ինչպես նաև նպաստել այլ ինստիտուտների հետ արտաքին կապերի հաստատմանը և կամ զարգացմանը<sup>10</sup>։

Սոցիալական աշխատողը, անկասկած, գտնվում է նպաստավոր դիրքում նմանատիպ փոփոխություններ և նախաձեռնություններ իրականացնելու համար, քանի որ մասնագիտական անմիջական շփումներն ու փոխհարաբերությունները բնակչության տարբեր խավերի ներկայացուցիչների հետ բույլ են տալիս քաջատեղյակ լինելու վերջիններիս հուզող հիմնախնդիրներին ու կարիքներին, ինչպես նաև այն մասին, թե որքանով են պետության կամ հասարակական ու մասնավոր հատվածների մատուցած ծառայությունները նպատակային ու հասցեական, որպեսզի աջակցեն բնակչությանը իրենց հիմնախնդիրների լուծման և կարիքների բավարարման հարցում։ Սոցիալական աշխատողները ներառված են նաև սոցիալական ծառայությունների պլանավորման և կազմակերպման գործընթացների մեջ։ Նրանք ներկայացված են լինում սոցիալական քաղաքականության մշակման գործընթացներով զբաղվող համապատասխան նարմիններում։ Յետևաբար, սոցիալական աշխատողն այն մասնագետն է, որը, անշուշտ, առավել նպաստավոր դիրքում է գտնվում՝ նկատելու և արձանագրելու համար բնակչության որոշ խնբերի կամ լայն զանգվածների հետ տեղի ունեցող փոփոխությունների միտումները կամ փոխակերպումային գործընթացների հավանական հետևանքները։ Կիրառելով սոցիալական այնպիսի տեխնոլոգիա, ինչպիսին սոցիալական կանխատեսումն է, սոցիալական աշխատողը կարող է նաև կանխատեսել, թե փոխակերպումային գործընթացների և վերջիններիս հավանական հետևանքների անբարենպաստ ազդեցության տեսանկյունից բնակչության ո՞ր խումբն է առավել ռիսկային կամ խոցելի։ Սոցիալական աշխատողը կարող է նաև կոնկրետ քայլեր նախաձեռնել տվյալ փոփոխությունների բացասական հետեւկանքները կանխելու կամ մեղմելու և կամ բնակչության համապատասխան խնբերին անխուսափելի փոփոխություններին և դրանց հետևանքնե-

<sup>10</sup> Steu Shulman L. The Skills of Helping Individuals, Families, Groups, and Communities. Illinois, F. E. Peacock Publishers, 1999, էջ 714:

րին նախապատրաստելու համար: Նմանատիպ իրադրություններում պարզապես առաջնային կարևորություն է ստանում բնակչության սոցիալական սպասարկման և սոցիալական ծառայությունների մատուցման տարբեր մակարդակներում ներառված սոցիալական աշխատողների արդյունավետ համագործակցության հարցը: Միայն այդ համագործակցության շնորհիվ հնարավոր կիմի արագ արձագանքել հասարակությունում կամ սոցիալական որևէ խմբում տեղի ունեցող փոխակերպումների ընթացքին և արդյունքներին՝ շեշտադրելով բնակչության կյանքի որակի բարելավման և բարեկեցության ապահովման հիմնահարցերը: Սոցիալական աշխատողների համագործակցության միջոցով հնարավոր է ժամանակին նկատել և արձանագրել անցանկալի միտումների ի հայտ գալը և հարցի լուծումը տեղափոխել օրենսդրական դաշտ, ինչպես նաև սոցիալական կոնկրետ ծառայությունների ներդրման շնորհիվ մեղմել վերջիններիս ազդեցությունը կամ աջակցել բնակչության ռիսկային խմբերին հարմարվելու այդ փոփոխություններին:

Սոցիալական աշխատողների միջև համագործակցության հնարավոր եղբեր կարող է առաջարկել տվյալ երկրում գործող սոցիալական աշխատողների ազգային ընկերակցությունը, որը կապող օղակ հայիսանալով տարբեր ոլորտներում մասնագիտական գործունեություն ծավալող սոցիալական աշխատողների համար՝ կարող է էապես նպաստել մասնագիտության զարգացմանը ինչպես տվյալ երկրի սահմաններում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգանաքը, որ մեր երկրում սոցիալական աշխատանքի ներդրումը պայմանավորված է ներդրումը պայմանավորված է սոցիալական փոխակերպումներով:

Հայաստանում սոցիալական աշխատանքը սոցիալական փոխակերպումների «ծնունդ» է, քանի որ մեր երկրում սոցիալական աշխատանքի ներդրումը պայմանավորված է իր հենց սոցիալական փոխակերպումների բացասական ազդեցությունների և անբարենաստ հետևանքների հաղթահարման անհրաժեշտությամբ: Սոցիալական աշխատողներն ակտիվորեն ներգրավվեցին նախ Սպիտակի երկրաշարժի, այնուհետև արցախյան պատերազմի ժաման հետևանքների հաղթահարման գործընթացի մեջ՝ այդ փորձը զարգացնելով և այժմ ևս արդյունավետորեն կիրառելով սոցիալական փոխակերպումների բացասական հետևանքները հաղթահարելու նպատակով: Նշված իրադարձությունները նույնիսկ յուրատեսակ խթանիչների դեր կատարեցին Հայաստանում «սոցիալական աշխատանք» մասնագիտությունը զարգացնելու առումով:

Այսպիսով, սոցիալական աշխատողն աջակցում է հարմարվել և առավելագույնս դրսևորվել սոցիալական տարաբնույթ փոփոխությունների ընթացքում կամ այդ փոփոխությունների հետևանքով առաջացող իրավիճակներում: Սակայն իր մասնագիտական գործունեությանը նա նույնպես նպաստում է որոշակի փոփոխությունների իրականացմանը: Չպետք է մոռանալ նաև այն փաստը, որ սոցիալական աշխատանքի ինստիտուտի գործառությներից է փոփոխությունների ներմուծումը, քանի որ սոցիալական աշխատողը, լինելով որոշակի մշակույթի կրող, հետագայում այդ մշակույթը փորձում է սերմանել իր այցելուների մեջ՝ դրանով իսկ փոփո-

խելով նրանց աշխարհայացքը, աշխարհնկալումը, դիրքորոշումները, արժեքները, ապրելակերպը, Վարքը, հնտությունները և նույնիսկ կյանքը: Սոցիալական աշխատողը նպաստում է նաև սոցիալական ինստիտուտների կամ կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության և կամ որդեգրած քաղաքականության փոփոխմանը: Սրանք ևս փոփոխություններ են և այն էլ բավականին լուրջ: Այսպիսով, սոցիալական աշխատողները՝ որպես սոցիալական գործակալներ, նաև փոփոխություններ առաջացնող մասնագետներ են, և դա դարձել է նրանց մասնագիտական գործունեության անբաժան մասը: Սակայն պետք է հիշել նաև այն, որ սոցիալական աշխատող-մասնագետները՝ որպես համարդկային արժեքների կրողներ, իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են հենց այդ արժեքներով: «Մարդ գերազույն արժեք է», «Դարգել և ընդունել մարդուն այնպիսին, ինչպիսին նա կա», «Դավատակ, որ մարդը կարող է փոխվել». սրանք այն արժեքներն են, որոնցով առաջնորդվում են սոցիալական աշխատողները, և որոնք սոցիալական աշխատողները փորձում են սերմանել իրենց այցելուների մեջ:

**ЕВГИНЕ ВАРДАНЯН – Роль социальной работы в процессе социальных трансформаций.** – Социальные трансформации – неотъемлемый элемент современного общества. Трудно представить хоть одну социальную систему, которая не подвергалась бы отрицательным воздействиям социальных трансформаций. В системе нарушается равновесие и ограничиваются ее возможности функционировать эффективно. Отрицательные последствия социальных трансформаций проявляются также на личностном уровне: они заметно меняют межличностные отношения и деятельность личности.

В статье исследуется социальная работа, призванная помочь социальным группам и отдельным людям подготовиться к возможным социальным трансформациям, преодолеть их неблагоприятные последствия и эффективно адаптироваться к новым условиям. У социальной работы имеется и превентивная функция – предотвратить отрицательные воздействия и последствия социальных трансформаций.

**YEVGINE VARDANYAN – The role of social work in the process of social transformations.** – Social transformations are an inextricable part of the contemporary society. Nowadays it is very hard to find any social system that has never undergone the negative effects of social transformations. The result of such transformations is the breach of harmony in the system and the limitation of the system's opportunities for effective functioning. The negative consequences of social transformations also occur on the individual level introducing significant changes into the interpersonal relationships and social functions.

The present paper seeks to observe the role of the social work in the process of negotiating the negative influences of social transformations and the role of social work for helping people get accustomed effectively to the new conditions. The paper also considers how a social worker can prevent negative influences and consequences of the social transformations.